ՊԱՅՄԱՆԱԳԻՐ CPS-23-08-2016
ԿՈՄԵՐՑԻՈՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

Ք.Երևան **«28» 09 2016թ.**

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա.Համբարյանի /այսուհետ «Պատվիրատու»/, մի կողմից և «Հայփոստ» ՓԲԸ, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Ավագյանի /այսուհետ «Կատարող»/, մյուս կողմից, հետագայում «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 31.05.06թ. թիվ 3-ն և 24.05.06թ. թիվ 132-ն «Ընտրությունների ժամանակ քվեարկության օրվա, տեղի և ժամանակի մասին ընտրողներին ծանուցելու կարգը սահմանելու մասին» համատեղ հրամանով և իրենց կանոնադրություններով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 «Պատվիրատուն» պատվիրում է, իսկ «Կատարողը» պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով և ժամկետներում 2016 թվականի հոկտեմբերի 2-ին Շիրակի և Լոռու մարզերի Գյումրի և Վանաձոր համայնքներում ավագանիների ընտրությունների համար իրականացնել քվեարկության օրվա, տեղի և ժամանակի մասին ընտրողներին հանձնվող ծանուցագրերի պատրաստման, «Պատվիրատուի» կողմից տրամադրվող տվյալներին համապատասխան ծանուցագրերի տպագրման և առաքման ծառայություններ, այսուհետ «Ծառայություն», իսկ «Պատվիրատուն» պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով և ժամկետներում վճարել այդ «Ծառայության» դիմաց:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. «Պատվիրատուն» իրավունք ունի՝

2.1.1. պահանջել «Կատարողից» սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված «Ծառայությունը» մատուցել ամբողջ ծավալով և սահմանված ժամկետներում.

2.1.2. «Ծառայության» կատարման ընթացքում ստանալ տեղեկություններ «Ծառայության» մատուցման ընթացքի վերաբերյալ.

2.1.3. ներկա գտնվել ծառայության կատարման գործընթացին, առանց միջամտելու «Կատարողի» կողմից մատուցվող «Ծառայության» գործընթացին:

2.2. «Պատվիրատուն» պարտավոր է՝

2.2.1. վճարել մատուցած ծառայության համար սույն պայմանագրի 3-րդ կետին համապատասխան.

2.2.2. Մինչև 2016թ. օգոստոսի 22-ը «Կատարողին» տրամադրվել են ընտրողների ընդհանուր թվաքանակի մասին փաստաթղթային տեղեկություն /տեղեկանք/՝ այդ թվաքանակին համապատասխան ծանուցագրերի պատրաստման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար.

2.2.3. Մինչև 2016թ. օգոստոսի 22-ը հանձնման-ընդունման ակտով «Կատարողին» տրամադրվել են տվյալ օրվա դրությամբ ընտրողների ճշգրտված տվյալները /ընտրողների հասցեները, ընտրողների անուն ազգանունները, ընտրական տեղամասերի հասցեները և ընտրական տեղամասերի համարները/.

2.2.4. Սույն պայմանագրի 2.2.2. կետում նշված ժամկետում սույն պայմանագրի 2.2.3. կետով նշված տվյալների էլեկտրոնային տարբերակը «Կատարողին» տրամադրել մագնիսական կրիչներով՝ ընդունման-հանձնման ակտով.

2.2.5. «Կատարողի» կողմից կազմված «Ծառայությունների» կատարման հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը հաստատել և վերադարձնել «Կատարողին» դրանք ստանալու օրվան հաջորդող 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում ներկայացված արձանագրությունում և հաշիվ-ապրանքագրում արտացոլված տվյալների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում՝ քննարկել դրանք «Կատարողի» հետ և անհրաժեշտության դեպքում ճշգրտումներ կատարել ոչ ուշ քան հանձնման-ընդունման արձանագրությունն ու հաշիվ ապրանքագիրը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. «Կատարողը» իրավունք ունի՝

2.3.1. «Պատվիրատուից» պահանջել սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված «Ծառայության» դիմաց վճարել պայմանագրի 3-րդ կետին համապատասխան.

2.3.2. «Պատվիրատուն» մինչև 2016թ. օգոստոսի 22-ը հանձնման-ընդունման ակտով իրեն տրամադրել է տվյալ օրվա դրությամբ ընտրողների ճշգրտված տվյալներ՝ ընտրողների անուն ազգանունները, հասցեները, ընտրական տեղամասերի հասցեները և ընտրական տեղամասերի համարները.

2.3.3. պահանջել «Պատվիրատուից» սույն պայմանագրի 2.2.3. ենթակետում նշված տվյալների էլեկտրոնային տարբերակը իրեն տրամադրել մինչև 2016թ. օգոստոսի 22-ը մագնիսական կրիչներով՝ ընդունման հանձնման ակտով:

2.3.4. Պահանջել «Պատվիրատուից» սույն պայմանագրի 2.2.2 կետում նշված տեղեկատվությունը տրամադրել նույն կետով նախատեսված ժամկետում:

2.4. «Կատարողը» պարտավոր է՝

2.4.1. ծանուցագրերը պատվիրել սույն պայմանագրի 2.2.2. կետով նախատեսված «Պատվիրատուի» կողմից տրամադրված ընտրողների ընդհանուր թվաքանակին համապատասխան, այն է՝ 222,486 ընտրող.

2.4.2. սույն պայմանագրի 1.1. ենթակետում նշված «Ծառայությունը» մատուցել ամբողջ ծավալով և սահմանված ժամկետներում.

2.4.3. Ծանուցագրերը պատրաստել, տպագրել և առաքել դրանք ըստ հասցեների, սույն պայմանագրի 2.2.3. կետով նախատեսված և «Պատվիրատուի» կողմից փաստացի տրամադրած տվյալներին համապատասխան «Հասարակ» ձևակերպումով նամակագրական թղթակցության առաքման համար սահմանված կարգով՝ բաց վիճակում առանց ծրարավորման:

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված գործընթացներն սկսել սույն պայմանագրի 2.2.2 և 2.2.3 կետերով սահմանված տվյալներն ստանալու օրվանից, այն է՝ 2016թ. օգոստոսի 22-ից և ավարտել գործընթացները՝ ընտրությունների օրվանից 3 /երեք/ օր առաջ / 2016թ. սեպտեմբերի 28-ին:

2.4.5. Յուրաքանչյուր ընտրողին ծանուցել առանձին ծանուցագրով:

2.4.6. Ծառայությունների մատուցման ավարտին կազմել և «Պատվիրատուի» հաստատմանը ներկայացնել «Ծառայության» մատուցման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրություն և հաշիվ ապրանքագիր:

2.4.7. «Ծառայության» մատուցումն ավարտելուց 20 աշխատանքային օրվա ընթացքում «Պատվիրատուին» հանձնել ոչ «Կատարողի» մեղքով չհանձնված ծանուցագրերը և դրանց մասին կազմված ամփոփ տեղեկանքը: Սույն պայմանագրի իմաստով ոչ «Կատարողի» մեղքով չհանձնում է համարվում, երբ առկա են հետևյալ դեպքերից որևէ մեկը.

ա) հասցեատիրոջ բացակայությունը.

բ) ոչ լրիվ կամ թերի հասցե.

գ) սխալ հասցե.

դ) հասցեատիրոջ տեղափոխումը.

ե) հասցեատիրոջ հրաժարումը.

զ) չպահանջման պատճառը.

է) հասցեատիրոջ մահը:

Սույն ենթակետում նշված ոչ «Կատարողի» մեղքով չհանձնման դեպքերը առկա են, երբ կատարողի համապատասխան աշխատակիցը երկու անգամ ապարդյուն փորձ է կատարել ծանուցագրերը հանձնել ըստ հասցեի:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի 1.1. կետով սահմանված «Ծառայության» դիմաց «Պատվիրատուն» «Կատարողին» յուրաքանչյուր ծանուցագրի պատրաստման, դրանց վրա տվյալների տպագրման և ըստ հասցեի առաքման, այդ թվում նաև առաքված, բայց ոչ «Կատարողի» մեղքով չհանձնված յուրաքանչյուր ծանուցագրի համար վճարում է 98.75 ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

3.2 Պայմանագրի գինը կազմում է 21,970,492.5 /քսանմեկ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր իննսուներկու ամբողջ հինգ տասնորդական/ ՀՀ դրամ, որից 13,321,068.7 /տասներեք միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար վաթսունութ/ ՀՀ դրամը վճարվում է համաձայն սույն պայմանագրի 3.4 կետի պայմանների, իսկ 8,649,423.8 /ութ միլիոն վեց հարյուր քառասունինը հազար չորս հարյուր քսաներեք/ ՀՀ դրամը վճարվում է սույն պայմանագրի 2.2.5 կետով սահմանված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը երկողմանի հաստատելուց հետո ոչ ուշ քան 2017թ. մարտի 31-ը: Սույն Պայմանագրի գինը հաշվարկվում է սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված մեկ ծանուցագրի պատրաստման և առաքման համար սահմանված գինը բազմապատկելով սույն պայմանագրով սահմանված ընտրողների թվաքանակով:

3.3. Եթե սույն պայմանագրի 2.2.3. կետով նախատեսված ընտրողների ընդհանուր թվաքանակը կգերազանցի 2.4.1. կետով արձանագրված ընտրողների ընդհանուր թվաքանակը, ապա «Կատարողը» ընտրողների ավել քանակի համար սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցում է սույն պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո: Ընտրողների ավել քանակի համար սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտության դեպքում «Պատվիրատուն» նախապես, ոչ ուշ քան քվեարկության օրվանից 15 օր առաջ սույն պայմանագրում փոփոխություն կատարելու մասին լրացուցիչ համաձայնագրի նախագիծը ներկայացնում է «Կատարողին», միաժամանակ ներկայացնելով նաև ընտրողների ավել քանակի վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվությունը՝ մագնիսական կրիչով:

3.4.Սույն պայմանագրի 3.2 և 3.3 կետերով սահմանված «Ծառայության» գինը «Պատվիրատուն» «Կատարողին» վճարում է սույն պայմանագրի 2.2.5. կետով սահմանված կարգով *և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված* ժամկետներում «Ծառայության» կատարման արձանագրությունն ու դրա հիման վրա կազմված հաշիվ-ապրանքագիրը երկկողմանի հաստատելուց հետո 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.5. Ծառայությունը մատուցված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմ ստորագրելու պահից:

4.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ /

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում «Կողմերն» ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար «Կողմերը» պատասխանատվություն են կրում ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով.

5.2. «Կատարողը» պատասխանատվություն չի կրում առաքված, բայց ոչ իր մեղքով չհանձնված ծանուցագրերի համար.

5.3. «Կատարողը» պատասխանատվություն չի կրում «Պատվիրատուի» կողմից սույն պայմանագրի 2.2.3. կետով նշված տվյալների անճշտության համար:

5.4. «Կատարողը» ազատվում է պատասխանատվությունից՝ սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, եթե դրանք հետևանք են «Պատվիրատուի» կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման:

5.5. «Կատարողի» կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում «Կատարողից» յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ չմատուցված ծառայության գնի 0.05 % չափով. սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կատարողից գանձվում է տուգանք չկատարված կամ ոչ պատշաճ կատարված գնի 0.5 % չափով:

5.6. Սույն պայմանագրի 2.2.2, 2.2.3 և 2.2.5 կետերով սահմանված ժամկետների խախտման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.4 կետով սահմանված վճարման ժամկետի խախտման դեպքում «Պատվիրատուն» «Կատարողին» վճարում է տույժ ուշացրած յուրաքանչյուր օրվա համար սույն պայմանագրի գնի 0.05 տոկոսի չափով:

5.7. Սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են «Պատվիրատուի» կողմից «Ծառայության» մատուցման դիմաց «Կատարողին» վճարման ենթակա գումարներից:

5.7. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը «Կատարողը» ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/ կամ «Կատարողը» հաղթող ճանաչելու /ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո «Պատվիրատուն» իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, «Պատվիրատուն» չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով «Կատարողի» համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ «Կատարողը» պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել «Պատվիրատուի» կրած վնասները, այն ծավալով, որ չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ «Պատվիրատուի» ստացածով:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ «Կողմերի» միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:
7.2 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:
7.3 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա/ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ/ եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ.

7.3 Սույն պայմանագրից բխող հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները երրորդ անձանց կարող են տրամադրվել միայն «Կողմերի» համաձայնության դեպքում և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների պատշաճ կատարումը:
7.4 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, որ դրանք կատարված են գրավոր և ստորագրված «Կողմերի» կողմից: 7.5 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող հինգ օրինակից, որից երեք օրինակ տրամադրվում է «Կատարողին», երկուսը՝ «Պատվիրատուին»:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պատվիրատու»	«Կատարող»
ՀՀ ոստիկանություն ք.Երևան, Նալբանդյան 130 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011159291 ՀՎՀՀ 01533334	«Հայփոստ» ՓԲԸ ք. Երևան, Սարյան 22 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 193000370315080 0 ՀՎՀՀ 02507464
_____ Ա.Համբարյան /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	_____Հ. Ավագյան /Գլխավոր գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար/

Գնման ժամանակացույց

Հավելված 1
«23» 09 .2016թ.
CPS 23-08-2016
ծածկագրով գնման պայմանագրի

N	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափման միավ.	2016թ. 3-րդ եռամսյակ			2016թ. 4-րդ եռամսյակ			2017թ. 1-ին եռամսյակ			2017թ. 2-րդ եռամսյակ			Ընդամենը /ՀՀ դրամ/
1	Փոստային ծառայություններ հոկտեմբերի 2-ին Շիրակի և Լոռու մարզերի Գյումրի և Վանաձոր համայնքներում ավագանիների ընտրություններ	դրամ			21,970,492.50										21,970,492.50
	Ընդամենը														21,970,492.50

Վճարման ժամանակացույց

Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեի ծրագրից

N	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափման միավ.	3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			Ընդամենը /ՀՀ դրամ/
			հուլ.	օգոս.	սեպտ	հոկտ	նոյ.	դեկտ.	հունվ	փետր	մարտ	ապր.	մայ.	հուն.	
1	Փոստային ծառայություններ հոկտեմբերի 2-ին Շիրակի և Լոռու մարզերի Գյումրի և Վանաձոր համայնքներում ավագանիների ընտրություններ	դրամ				21,970,492.50	21,970,492.50	21,970,492.50	21,970,492.50	21,970,492.50	21,970,492.50	21,970,492.50	21,970,492.50	21,970,492.50	21,970,492.50
	Ընդամենը														21,970,492.50

«Կատարող»
«Հայփոստ» ՓԲԸ
ք. Երևան, Սարյան 22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300037031508 00
ՀՎՀՀ 02507464
----------Հ.Ավագյան
/Գլխավոր գործադիր տնօրենի ժ/պ/

«Պատվիրատու»
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011159291
ՀՎՀՀ 01533334
----------Ա.Հարությունյան

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. ապրիլի 1-ի
Թիվ 179-Ն հրամանի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն